րիկ աւելի եւս գրգռէր կինն թագաւորին ի վերայ նորա. մինչ զի եւ զաւր գումարեցին ի վերայ Վարդանայ, զի երթեալք սպանցեն զնա. նա եւ ինքն իսկ իւր եղբայր Վասակ երթայր ի վերայ նորա:

13 Ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Էրախանի[1] կոչի: *14* Իբրեւ տեսին զգունդն թէ Վասակ է, ոչ ինչ երկեան եւ ոչ զգուշացան կամ կասկածեցին. համարեցան զզաւրն եղբաւրն՝ թէ խաղաղութիւն է եկն նորա, մինչ իջին առ խորանին դուրս, զի էր հարեալ զխորանն ի ձոր յունջ բերդին: *15* Եւ մարդիկ զաւրացն Վասակայ էին ամենեքեան ի ծածուկ վառեալք եւ ի վերայ ագուցեալք հանդերձ: *16* Եւ մինչ դեռ նա լուանայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերաւք բազում մարդիկ, եւ խոցոտէին զնա մինչ դեռ նա կայր խոնարհեալ՝ զի արկցեն ջուր ի վերայ նորա: *17* Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն ի կողի սպանանէին զնա:

18 Եւ կինն նորա յղի էր, եւ հասեալ էին աւուրք ծննդեան իւրոյ: *19* Մինչ դեռ ի վեր ի բերդին նստէր ի գահոյս իւրում, եղեւ գոյժ սաստիկ. իսկ նա իբրեւ զձայն գուժոյն լսէր, վազէր ի գահոյից անտի, եւ ընդ վազելն ծնանէր զմանուկն: *20* Եւ կոչէին զանուն մանկանն յանուն հաւր իւրոյ Վարդան:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս թէ զիա՛րդ անմտութեամբ գնայր ի սպանութիւնս նախարարացն յանխնայ Արշակ արքայ Հայոց:

2 Այլ ահա ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, եւ ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն, այնուհետեւ ըստ կամաց չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա. եւ զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, եւ զբազմաց տունս հատանէր յարքունիս: *3* Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ եւ Արշարունեաց, ազգատ[2] առնէր, եւ զգաւառսն ունէր յոստան:

4 Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զաւրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին: *5* Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն: *6* Եւ զգաւառն յուտեստ ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն:

---

1 *Ի միում օրինակի՝* Ախանի

2 *Յամենայն օրինակս՝* ազատ առնէր